

# ՄՇԽԿ

Տարեկան դիմել 10 րուր, կէս տարեկան 6 րուր:  
Առանձին համարները 5 կողմով:  
Թիֆլիսում գրվում են միայն կաթողիկոսական մէջ:  
Ոտարարարացրելը սխալ է կամ սղակի  
Խաբուս. Редакция «Мшак»

Կաթողիկոսական քաղաքում 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տան օրերից)  
Յայտարարութիւնը ընդունելու է ամեն լիզուով:  
Յայտարարութիւնները համար գնումով են  
կիրարկուելու 2 կողմից:

### ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ խմբագրին,  
Ներքին լուրեր: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ,  
Ամերիկա: Աւստրո-Ունգարիա: Ֆրանսիա: Յունաս-  
տան: — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Թիբրաց շալատան:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Քանարագաղ, 15 յունիսի

1880 թվականի դեկտեմբերի վերջերին ստա-  
ցայ Միացեալ ընկ. տնօրէն ժողովը թիւ 369  
նամակն հանդերձ երեք հատ հանգանակութեան  
թերթով, համարաւ 148. 149. 150. որով հրաւի-  
րում են օգնել մեր ազգի կրթութեան գործին,  
վասնորից իբրև ազգի հարազատ զաւակ և ա-  
մենախոնարհ ծառայ, սիրով յանձն առի զլուս-  
տանել այս ամենահեշտ գործը, որը մեր հայերին  
մէջ ամենագիտուն է, յիշեալ թերթերից մէկն  
ուզարկեցի Շահրուզ պ. Գասպար Աղաւորկա-  
նին որը պ. Մնացականեանի գործակատարն է,  
միւսն ուզարկեցի Մէլեղիսէր պ. Գաւրիլ Գա-  
նեսանին և յնդրեցի որ աշխատեն ժողովելու,  
որ և մեծ ուրախութեամբ նորերս թերթերը յետ  
ստացայ իրենց ժողովում գումարներով, Շահ-  
րուզից № 150 թերթով քառասուն և երեք րուբլ,  
և Մէլեղիսէրից իննսուն և մէկ րուբլ 50 կոպ.  
որ և կը նուիրեն պարտենքին իմ անկեղծ և  
ջերմ շնորհակալութիւնը. № 149 թերթովն է,  
բայց ինչպէս լսեցի Բարթոլոմէոս ոմանք չար  
նախանձով չեն ստորագրով, որոնց համար ես  
կը մտնեմ Տէրից այնպիսիներն տայ բարի խիղճ  
և բարի նախանձ. իսկ միւս թերթն ես ժողո-  
վեցի թէ աստի ժամանակուորայն բնակվող-

ներից և թէ անցորդները, որոնք գոնովեամբ  
ընծայեցին ազգի լուսաւորութեան համար, մի  
և նոյն ժամանակ զանկանալով խորութիւն չը  
դնել ազգի մէջ, ընդունել զպրոցում ամեն ազգի  
մանուկներին, որոնք կը զանկան և կրթել ու  
ազատել իրանց վայրենութիւնից, որ մեր եղ-  
բարք և քոյրք ազատվեն անգթութեան ճանկե-  
րից, և իրանց ապրուստը ճարեն իրանց սովոր-  
ած գիտութիւններից, և այստեղի ժողովածն  
էլ գոյացաւ երեք հարիւր քսան և հինգ րուբլի  
50 կոպ., որոց գումարն միասին եղաւ 460 րուբլ  
որը այս նամակին յետ ձեզ եմ ուղարկում հանգա-  
նակութեան թերթերի յետ, կը խնդրեմ հասցնել  
սրանք Միացեալ ընկ. և նուիրատուաց անուն-  
ներն տպագրէք ձեր պատական «Մշակ» լրագ-  
րի առաջիկայ թերթերի մէկի մէջ նուիրատու-  
ների գիտութեան համար:

Թիւ 148 հանգանակութեան թերթն քանա-  
րագաղում իմ ձեռք. Թիֆլիսներ՝ Նախչուճ խա-  
չատուրեան 50 ր., Զմբուլտ Գանեսան 10 ր.,  
Աննայ Յովսէփեան 5 ր., ուսու տիկնայք Н. Го-  
ронович 3 ր., Евгения Панкова 3 ր., պ. պ.  
Արքաճամ Նախիբեան 25 ր., Յովսէփ Մատու-  
րեան 25 ր., купецъ Александръ Грановъ 25 ր.,  
Պետիան Տէր-Օհանեան 20 ր., Առաքել Գանեսան  
և որդիք 15 ր. 50 կ., Գրիգոր Տէր Գալովթեան  
12 ր., Գաւրիլ Գրիգորեան 10 ր., Առաքել Մար-  
խանեան 10 ր., Միւսէօն Ամարեան 10 ր., Գեորգ  
Բարսեղեան 10 ր., Աւագ Պողոսեան 10 ր.,  
Ինչիւցի վաճառական Նիկոլ Մանուկ թուրք-  
ման 10 ր., Захаръ Давидовъ թիֆլիսցի 10  
ր., Մովսէս Ներսիսեան 10 ր., Աւետ Անանեան  
5 ր., Կերտուի Գասպարեան 5 ր., Կոնստանդին  
Կոնստանդինեան 5 ր., Прапорщикъ Молоховецъ  
5 ր., Աւետիս Ա. Քոչարեան 5 ր., Քրիստափոր  
Արեան 5 ր., Աւետիս Հախումեան 4 ր., Յարու-  
թիւն Կարապետեան 3 ր., Խաչատուր Սուր-  
գով 3 ր., Գրի. . . . . 3 ր., Бенедиктъ Горо-  
новичъ 3 ր., Արզուման Տէր-Յովսէփեանեան 3 ր.  
և Հմայակ Փանեան 3 ր. Ամենն է 325 ր. 50 կ

Թիւ 149 հանգանակութեան թերթն Մէլեղի-  
սէր Գ. Փանեանի ձեռքն. Թաղեոս Բաւարա-  
նեան գործ. Տէր Օհանեան 14 ր., Մարգար Յով-  
հաննիսեան 10 ր., Համարձում Նազարեղեան  
10 ր., Վասիլ Բարսեղեան 10 ր., Մատթէոս  
Յովսէփեան 10 ր., Գեորգ Բաղդեան 6 ր., Գա-  
ւրիլ Փանեան 5 ր., Արիստակէս Եկանեան 4 ր.,  
Անայա ոմն 3 ր., Սովիա Փանեան 3 ր., Յով-  
հաննիս Փանեան 2 ր., Գեորգ Արեան 2 ր., Բս-  
վակիմ Ղարաբանեան 2 ր., Յակովբ Ղարաբա-  
նեան 2 ր., թուրք Մաշ. Սամաղ Շամարեցի 2  
ր., Սահակ Հայրեան 2 ր., Կարապետ Բունե-  
թեան 2 ր., Յովհաննէս Տէր Սարգսեան 1 ր. 50  
կ., Մանուկ Մանուկ օզլի պարսիկ 1 ր., ա-  
մենն է 91 ր. 50 կ.

Թիւ 150 հանգանակութեան թերթն Շահրու-  
թում, ձեռամբ պ. Գասպար Աղաւորկեանի. Համ-  
բարձում և Մովսէս գործակատարնիս Աղաւան  
10 ր., գործակատար Մնացականեան 6 ր., Ղա-  
զար Օհանեան 5 ր., Գասպար Մանուկ Աս-  
տուածատուրեան 5 ր., կղաղքը Գաբարիա և  
Յարութիւն Տէր Պետրոսեան 5 ր., Ն. Տէր Մով-  
սէսեան և Ա. Իւզրաշեան 5 ր., Գրիգոր Խաչա-  
տուրեան 3 ր., Сафтаръ Персиянинъ 3 ր., Ալի  
Մանուկ պարսիկ 1 ր., ամենն է 43 ր. Ընդա-  
մենը 460 ր.: փոստի ծախքն էլ ինձնից:

Աւետիք Փանեան

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» № 121 «Թիբրաց շալատան» յո-  
ղուածի վերջին թերթի գումարի մէջ սխալմամբ  
քրիստոնեաների թիւը փոխանակ 335,729 լինե-  
լու տպով է 100,469:

ՇՈՒՇՈՒՑ գրում են մեզ: «Տեղիս քաղաքային  
պարտի մի թուրք աշակերտ այս օրերս անհե-  
տացել է: Ասում են թէ նա նախանձի գոճ է

գնացել: Երեք շաբաթ է, որ պոլիցիան որո-  
նում է նրան, բայց դեռ ոչինչ հետքերն էլ չեն  
գտել:»

Մի նորեկ զինուոր Շուշու մէջ, իր կնոջից  
նամակ ստանալով թէ իր հեռանալուց յետոյ  
հայրը նրան շատ է հալածում և տան չէ պա-  
հում, մտաւանջութեանից անձնապահութիւն  
գործեց:

ՂԱՐԱՔԻՒՍԻՑ մեզ գրում են: «Ղարաքիւսի  
պարտի համար նոր հոգաբարձուներ են հարկա-  
ւոր, բայց, ինչպէս երեսու է Ալեքսանդրապոլի  
հոգեւոր կառավարութիւնը լրագրներ անգամ  
չէ կարգում: Նա պիտի միջամտէ, կարգադրու-  
թիւն պիտի անի, թէ նրա վրայ չը կայ այդ պար-  
տականութիւնը:»

Մեր թղթակիցը Ղարաքիւսից գրում է մեզ  
հետեւեալը: «Իմ նամակին մէջ որ տպւած էր  
«Մշակի» 109 համարում, անպարտաբար մի սը-  
խալ է մտել, որ հարկաւոր եմ համարում ուղ-  
ղել: Այնտեղ ասված էր որ մի օր զպրոցը  
անանկուցած էր համարվի, եթէ գործերի  
գրութիւնը պարզապէս անտարբեր և զանազակ  
թանայ: Եւ յի կարծիքը չատ ճշմարիտ է, բայց  
ոչ թէ գանձի կողմից կը մանականայ զպրոցը,  
քանի որ փողերը Արսէլ է քանանայի ձեռ-  
քին են: Ամեն բան կարող է պատահել զպրոցի  
հետ, բայց զպրոցի փողերը ոչ մի տեղ այնքան  
ապահով չեն, որքան յիշեալ քանանայի մաս.  
սա անուրանալի է: Արեւմտեան մանկանալ բառը  
չը պէտք է հասկանալ նիւթական կողմից:»

Վաւառական բոլոր հայրենակ քաղաքներից  
ստացվող նամակները միշտ մի և նոյն գանգա-  
ներ են յայտնում, կարծես թէ բոլոր նամակնե-  
րը մէկից արտագրված լինելն. «մեր զպրոցը  
վատ է դնում, կարող է ոչնչանալ, հոգաբար-  
ձուները անհոգ են, ուսուցիչները անկարգ, տե-

### ԹԻՒՐԿԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆ

Բ. Մ. ա. ս.

Տաճկա-Հայաստանի հիւսիսային սահմանի վրա,  
երբ ճանապարհորդը առաջին անգամ գնում է իր  
տորը, հնթարկվում է յանկարծական փոփոխու-  
թեան: Նա շինութեան աշխարհից յանկարծ  
մտնում է աւերակների աշխարհ, որովհետեւ նա  
իր հոտից արդէն թող է արևի Գեղամայ, Ապա-  
րանի, Երևանայ և Արարատեան դաշտի խիտ  
բնակված և բաւական լաւ մշակված գաւառ-  
ները:

Սահմանից այն կողմ, բոլոր Ալաշկերտում  
տիրում է մի խորին անայութիւն: Կենդանու-  
թիւնը դադարել է այդ կողմերը գոյութիւն ու-  
նենալից: Այնու էր, երբ մինք անցկացանք այդ  
արգաստաբեր սարերից և ձորերից: Պարարտ արօ-  
ար չօջախում էր մեր ձիերու ատղանդակները, ոչ  
արածացող կենդանիք կային, ոչ գիւղեր, ոչ  
մարդիկ և ոչ անգամ թռչուններ:

Ես և իմ ընկերը, երկու հոգի, այդ սարապիկի  
ամայութեան մէջ, առաջ էինք գնում վաղուց  
արդէն կորցրել էինք այն շաւիղը, որին այն  
կողմ ճանապարհ են անուանում: Ընկերոջս  
մտաւանջութիւնը փարատելու համար, ես նրան  
ապահովագրի, որ Տաճկաստանում ամեն կողմը  
ճանապարհ է, քանի որ ոչ մի ճանապարհ չը  
կայ, միայն Տրապիզոնից Պարսկաստան տա-  
նող աւերական ճանապարհն է, որ մինչև կա-  
րին է շինված:

Բայց կեղծից մինչև սուրբ Յովհաննու վանքը,

մենք ոչ մի շինութեան, ոչ մի կենդանու, բացի  
չորս աւազակներից, ոչ մի մարդի չը պատահե-  
ցինք: Մենք պատահում էինք աւերված գիւղա-  
տեղերի, ախոսների ուրվագծերը, ջրանցքների  
թոււմերը ցոյց են տալիս, որ այդ վայրերը ժա-  
մանակով մշակված են եղել:

Ինչ դժբաղդութիւն է այնպիսի տեղերից  
անցկենալ մութ տխրութիւնը տիրում է մար-  
դին, նրա մտքերը տատանվում են աղջամղջի մէջ,  
որ թտփառելով հանում են այն ժամանակին,  
երբ այդ վայրերը, չէն և բարեբաղդ են եղել, շի-  
զական սողջկոււք, մանկուճք ծաղկիներ, բան-  
ջարդէններ ևն քաղել, հովիւները, նախորդները  
արածացրել են իրանց հօտերը. նրանց քաղցրա-  
հնչիւն սրնգին արձագանք են տուել սիրոյ սէր  
կուսանաց, տղամարդը մրմունջներ և թռչուն-  
ների ճիւղերը, աշխատասէր երկրագործի ոգևո-  
րել երգերը յոյս են տուել առատ հունձի և  
կեանքի: Այդպիսի մտածումներն միջոցին  
մարդի սէքը կրկին բացվում է թափուր լեռների  
և ձորերի վրա, որոնք խորին լուսութիւնով սուր  
են պահել իրանց նախնի բնակիչների տարա-  
բազմութեան մրա:

Այդպէս է Տաճկա-Հայաստանի վիճակը, որին  
կարելի է աւերակների և տխրութեան աշխարհ  
անուանել:

Մեծ և ընդարձակ դաշտեր, կանաչազարդ հո-  
վիտներ, ձաղկալի կապույտ լեռներ, բոլորը  
մարդաբնակութեանից, շինութեանից, կեանքից  
զազարել են:

Կարծես մի ժանտախտ, մանտարածում սրբել  
ու տարել է ամենը:  
Այն, տիկնայք և պարոններ, վատթար կաւա-  
վարութիւնը, մի աշխարհի համար, ժանտախտից  
էլ ստակալի է, Նա աւելի կտորած է անում,  
աւելի մտակութիւն է տարածում:

Չանտախտը ժամանակաւոր է, կանցնի ու կեր-  
թայ, բայց մի վատթար կառավարութիւն մշտնջե-  
նաւոր է, նա իր թիւնաօրիշ, սպանիչ ազդեցու-  
թիւնը գործ է դնում ամեն ժամանակ, ամեն օր,  
ամեն բողբ:

Այսպիսի հանտարած անկենդանութեան մէջ,  
տեղ տեղ օվառիսի նման ժողոված են խուճի-  
խումբ գիւղեր, որոնք դեռ աննկուն աշխատու-  
թեամբ կարողանում են պատերազմել սպանիչ  
տարերը դեմ: Նրանք մշակում են չըջակայ հո-  
ղիք, թէն վտանջ չեն որ իրանց արին քրտինքի  
պտուղը իրանք պիտի վայելեն:

Այք են այդ անապատի վայրենի խտութիւնը  
ամբողջ երկրագործները:

Գրանք, այնիս օճկոյրներ, ձեր համա-  
րին եղբայրներն են կամ լաւ ես ասել, դրանք  
պետական ճնշանց, սրածութեանց, հրաձգու-  
թեանց, աւտարութեանց, սովի, ժանտախտի  
դէմ կուռք և դեռ յաղթող հերոսներ և հերոս-  
ների սրղիններն են, որոնք զոհել են և զոհելու  
պատրաստ են ամենը, իրանց հայրենական աշ-  
խարհի մի թիղ հողի համար:

Այդ անօրինակ տոկոս դատակարգին է պար-  
տական ազգը իր աշխարհի հիացումը գրաւող  
գոյութիւնով:

Եթէ յանդգնութիւն անգամ համարվի, իմ  
կողմից, առաջին անգամ դէմ դնել այն ան-  
ձանց, որոնք հաւատացնում են թէ ազգը եկե-  
ղեցոյն է պահպանվել, նրանց, որոնք մասնագա-  
կանութիւն կամ մի այլ պատճառ են մէջ բերում,  
ես պէտք է հաստատիմ, որ այդ ամենը անհիմն  
են, որ ոչ թէ կրօնն է պահպանել ազգութիւնը,  
այլ աղդն է պահպանել իր կրօնը և այդ պահ-  
պանութեան համար, հինգերորդ դարուցը սկը-  
սած մինչև ներկայ տասն և իններորդ դարը,  
կրել է ամենադառն հալածանքներ թէ կրակա-

պաշտներից, թէ քրիստոնեաներից և թէ մասն-  
գականներից. այդ հալածանքների ժամանա-  
կամիջոցում նա իր անդամների թիւից սնրաւ  
կորուստներ է ունեցել:

918, 1252, 1393, 1431, 1580, 1600, 1607  
թվականներին Յուսուփ ոտովկանից, Լէնկ-Յե-  
մուրից, Խաքեանդարից, Պարսից և Օսմանցոյ  
պատերազմներից, Եւրոպական յափշտակու-  
թեանից և կոտորածներից պատճառած ետին  
անգամ գրիթէ իրարու յաջորդած սովի բուլ-  
րովին հալածեցին Հայաստանից հոյոց նախա-  
րարական ցեղերը, ազատներ, ոտանիկներ, մի  
խօսքով, բոլոր աղնուականութիւնը: Այդ թուա-  
կանների մեծամեծ գաղթականութիւնները իրանց  
հետ տարան և իրանց եկեղեցիին իր եղիկու-  
պոսներով, վարդապետներով և բանաստեղծով  
Բայց եկեղեցիին, այդ մի պատմական փաստ է,  
որ չը կարողացաւ նրանց հայրական գոյու-  
թիւնը պահպանել, որի հետ ինքն էլ մեռաւ:

Այն, հայ գիւղացին, որ աղնուական լեզուով  
ուսմիկ է կոչվում, նա միայն անտասան զինա-  
ցաւ, և նրա չոր, կոշտ ձեռները, որոնք ոչ թէ  
կարեկցարար և յարգանքով սեղմել, այլ մենք  
տեսքիցն անգամ զգում ենք, այդ աննկուն  
ձեռներն էին, որ մեզ պահպանեցին ազգային  
մեռելութիւնից և եթէ մի օր հանի ազգի վե-  
րականդան բողբն, այդ նրանց ջլատ և հաստա-  
տուն ոտների վրա միայն կարող է լինել:

Հայ գիւղացու բարձր արժանաւորութիւնը  
ցոյց տալու համար, բաւական չեն միայն անո-  
րոջ բաւեր, ինչպէս ես կրկնեցի՝ սրածութիւնը,  
յափշտակութիւն և այլն: Այդ բաւերը ոչ մե-  
ծութիւն, ոչ քանակութիւն, ոչ սաստկութիւն  
և ոչ չափ են ցոյց տալիս: Մի կատարեալ գա-  
ղափար կաղմուլը համար այստեղ յառաջ եմ  
բերում 1877-ից 1878 թվականի միայն վասպու-

սուչը տգետ և այլն: Այ մի դարոցի մասին դեռ չենք լսել մի լաւ խօսք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱ

Մայրաքաղաքի լրագիրները ստացել են հետեւեալ հեռագիրները վաշինգտոնից: Յունիսի 20-ին առաւօտեան 9 ժամին Միւսցեալ Նահանգների նախագահ Հարֆրիլդի վրա հրացան արձակեցին: Կործնու՞մ են, որ նախագահը ծանր վէրք է ստացել: Լուր է արածված, որ նա մեռաւ, բայց ընդհանուր խառնակութեան պատճառով դրական տեղեկութիւն անկարելի է ստանալ: Սպիտակ ճան շուրջը, որտեղ տարել են վիրաւորվածին, մեծ բազմութիւն է հաւաքվել: Ասում են, որ յանցարորը կալանաւորված է: Մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն: Բժիշկները յայտնել են, որ թէև նախագահի վէրքերը վտանգաւոր են, բայց անպայման մահացու չեն: Նախագահը ուշքի վրա է: Նա հեռագրով խնդրեց իր կրնոջից գալ իր մօտ: Մարդասպանը հրաժարվում է յայտնել իր սնունդը: Ասում են, որ առաջ նա Մարսելի մէջ հիւպատոս է եղած:

Յունիսի 21-ի հեռագիրը հաղորդում է հետեւեալը: Այսօր առաւօտեան 10 ժամին հրատարակված բիւլետենի համեմատ նախագահը ամբողջ գիշերը հանդիստ էր քրնած և կազուրկած զարթեցաւ: Յոյս կայ, որ նա կառողջանայ: Նախագահի ամուսինը հասաւ արտաքոյ կարգի գնացքով: Միւսցեալ Նահանգների ամբողջ մինիստրութիւնը գիշերը հիւանդի մահճակալի մօտ անցկացրեց: Յանցարորի անունն է Եւրլ Ժիւլ Գիտո: Նա ծնված է Իլինոյս նահանգի մէջ, մի ժամանակ Օնէյդի ընկերութեան անդամ է եղել և այնուհետեւ անաջողութեամբ փաստաբանութիւն է արել: Ամենքը նրան անուանում են սկզբունքներ չունեցող մի բաղդարնդիր, որ մինչև խելա-

գարութեան ստորիճան ցանկանում էր անպատճառ երեւել իննել: Գլխաւոր լրագիրները Գիտոին անբարոյական և խելագար են անուանում: Նա պատկանում է անբաւական դեմօկրատ կուսակցութեանը և անձնական անաջողութիւնների պատճառով կամենում էր անպատճառ վրէժխնդիր լինել նախագահից:

Միացեալ Նահանգների նախագահ Հարֆրիլդի վրա հրացան արձակող յանցարոր Ժիւլ Գիտո թէ կալանաւորվելու ժամանակ և թէ բանտի մէջ մի քանի անկապ նախադասութիւններ արտասանեց, որոնցից երեւում է, թէ նա խելագար է: Երբ յանցարորին կալանաւորում էին, նա ասաց. «Նա այդ բանն արի և կամենում էի կալանաւորված լինել: Գնեիւր Արտեր այժմ նախագահ է: Ես այստեղ մի նամակ ունեմ գեներալ Շերմանի վրա, պէտք է նրան յանձնել: Ես բոլորը կը պատկեմ պոլիցիականներին: Իր թղթերը և թէվոլիւր պոլիցիականներին տալու ժամանակ յանցարորը ասաց. «Ինձ ամուր բռնեցէք և տարէք երբորդ յարկը, առաջին սենեակը: Գնեիւր Շերման շուտով կը գայ իշխանութիւնը ընդունելու համար: Արտեր և այդ բոլոր մարդիկ իմ բարեկամներ են: Ես ձեզ պոլիցիայի կառավարիչ կը նշանակեմ: Այն տան տիկինը, որի բնակարանում կենում էր Գիտո, ասաց, թէ յանցարորի վարմունքը վերջին ժամանակներում շատ օտարօտի էր: Նա պարծեւում էր, թէ ծանօթ է սենատորների հետ և թէ նրան այցելում են երեւելի անձինք, թէպէտ այդպիսի այցելուներ նա երբեք չէ ունեցել: Գիտոի հարագատ եղբայրը յայտնեց, որ յանցարորին նա միշտ խելագար է համարել Ժիւլ Գիտոի գրաւոր ցուցմունքի մէջ ասված է. «Ես անձնակալն ապէս ոչինչ թշնամութիւն չունեմ դէպի Հարֆրիլդ: Նրա մահը քաղաքական անհրաժեշտութիւն է: Ես աստուածաբան, փաստաբան և քաղաքագետ եմ:»

Հարֆրիլդ ուշքի գալով կամեցաւ իմանալ բժիշկներից իր խելական դրութիւնը:

Բժիշկը ասաց, որ Հարֆրիլդի մահը գրեթէ անխախտելի է: Հարֆրիլդ նկատեց. «Թող այդպէս լինի, եթէ իմ մահը մօտ է, ես պատրաստ եմ: Այնուհետեւ նա միթիւսութեամբ էր իր հիւանդ կնոջը և երեխաներին: Եւրօպական բոլոր թագաւորներից և կառավարութիւններից համակրական հեռագիրներ են ստացված: Վիկտորիա թագուհին երեք հեռագիր ուղարկեց, որոնք բովանդակութիւնը չափազանց բարեկամական է: Ամերիկական դեսպանատները եւրօպական քաղաքների մէջ կատարելապէս լինեն այցելուներով, որոնք ցաւակցութիւն են յայտնում պատահած դժբաղդութեան ստիճով: Առհասարակ բոլոր նշանաւոր լրագիրները համակրութեամբ են խօսում Հարֆրիլդի մասին:

ԱՄՍՏՐՈՒՆԿԱՐԻԱ

Օրվայ նշանաւոր խնդիրը Պրագայի մէջ կատարված անկարգութիւններն են, որոնք առանց հետեւանքի չը մնացին: Անկարգութիւնները այն ստորիճան մեծ էին, որ գերմանական դեսպան կոմս Բէյս ստիպված էր միջամտել գործին: Գերմանական երկու հըպատակներ, որոնք բունութիւնների ենթարկվեցան, մի հեռագիր ուղարկեցին գերմանական դեսպանին, որով խնդրեցին բաւականութիւն և նրա պաշտպանութիւնը: Պրագայի համալսարանը փակված է և մինչև ձմեռ չի բացվի: Այդպիսի անկարգութեան դուրսը մտադիր է մի գեկուցում ուղարկել կայսրին և բացատրել Պրագայի մէջ պատահած անցքերը, բայց շատերը չեն հաւանում այդ գիտաւորութեանը: Վիեննայի համայնքների խորհուրդը մի վճիռ կայացրեց, որով նա յայտնու է իր անբաւականութիւնը Պրագայի մէջ կատարված անկարգութիւնների մասին և յոյս ունի, որ կառավարութիւնը բոլոր միջոցները գործ կը զննի իր հաւատարմի հպատակներին պաշտպանելու համար: Յունիսի 30-ին երեկոյեան անկարգութիւնները կրկնվեցան Գերմանա-

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական պատգամաւորների ժողովի մէջ յունիսի 30-ին եղած վիճարանութիւններից յետոյ ամենքը համոզվեցան, որ Ալբեր Գրեվի այլ ևս չէ կարող մնալ Ալժիրայի զլխաւորնահանգապետ: Յունիսից անհանգստացնող լուրեր են ստացվում: Ֆրանսիական հիւպատոսը Աֆալսի մէջ վիրաւորված է: Ֆրանսիական պատերազմական փոքր նաւերից մէկի օֆիցերները ափ իջան հիւպատոսին պաշտպանելու համար, բայց ստիպված էին լոյալով փախչել մինչև իրանց նաւը: Կարագրված է անյապագ գորքեր ուղարկել Աֆալս, որով-

բական նահանգում, այս լուստարեալ տասն և իններորդ գարում կատարված նորաստորութեանց ցուցակը, որ ժողոված եմ վանայ առաջնորդարանի արձանագրութիւններից:

Յիշեալ թուականում թէ կառավարութեանը և թէ քրդերի ձեռքով յափշտակված է նայ դիւզաբներէից 72,971 ոչխար:

Յափշտակված է 8,676 եղ: Եղջների մի մասի յափշտակութեան եղանակը շատ նետաքրքրական է: Անցեալ սուս-թիւրքական պատերազմին դիւզաբները, սէրութեան պահանջով, ստիպված էին բռնի պաշարեղէններ դնարել Օսմանեան բանակին, և իրանց սեփական եղջերով բանակումը տեղափոխել: Յետագարձին գիւզաքի կողպվում էին, եղջերը յափշտակվում և բանակի մէջ մորթվում էին, զօրքերին կերակրելու համար: Եղջ երկրորդները, զրկվելով նաև բեռան ջլալներից, պատարկ լալով յետ էին դառնում: Յափշտակված է 4889 կով, 658 ջորի, 732 ձի, 738 գոմէշ, 564 էջ:

Յափշտակված է 46 հրացան: Ուրեմն 1877-ին վասպուրական նահանգում 241,324 բնակիչ նայերի մօտ, միայն 46 հրացան է գտնվել:

Բնութեամբ առնված է 35,329 չափ ցորեն, ամեն մի չափը չորս պուլ ճաշելով, կանէ 141,316 պուլ:

Կողպում են 19 վանքեր և եկեղեցիներ, Սպանված են 152 մարդ: Բռնի կրօնափոխ եղած են 44 անձինք: Առեւանգած են 38 կանայք: Կատարված են 105 հրդեհներ:

Իսկ կողպում են սաւն կանկարասներ, երկրագործական, ջրաղացի, արհեստի վերաբերեալ գործիքներ, զգեստներ, ուտելիչէններ, ինչպէս նա, ձու, եղ. պանիր, ձաւար, յաւ, կաշառք և այլն, որոնք մանրամասնաբար գրված են ար-

ձանագրութիւնների մէջ, բոլորը գրամի վերածելով, մեռա հասնում է 12,362,127 գրամուշ, մօտաւորապէս 1,000,000 բ:

Պատերազմի տարին գիւզաքի բարբարոսութիւններից ազտակալու համար, իրանց ընտանեկան իրեղէնները թաղեցին հողում և փախան տարել: Այդ իրեղէնների մեծ մասը քրդերը հանեցին տարան, մնացած մասը փտաւ հողի մէջ: Այս վեամներն ևս մտցրած է վերայիշեալ գումարի մէջ:

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 72,971 ոչխար, 8,676 եղ, 4,889 կով, 105,987 պուլ ցորեն, 738 գոմէշ, 658 ջորի, 732 ձի, 564 էջ.

Այս ճաշից գուրս է մեռած թղթապարմի, պղնձի գրամի ֆեալը, որոնք բոլորովին իրանց արժէքը կորցնելով, չրջակայութիւնից գուրս ընկան: Մետաղք գրամներ, որոնք իրանց արժողութեան կէտ կորցրին: Կանտիլաների ֆեալ: Այս ամեն գրամական ֆեալները անգլիական մի լրագիր 50 միլիօնի է հասցնում: Կողպում են 19 վանքերի ֆեալը, 105 հրդեհների ֆեալը, վանայ հրդեհի ֆեալը 200,000 օսմանեան սակու, մօտ 1,000,000 բ. կարողութիւն աչրվեց, լնդա-

մեն վնասը կարելի է մօտաւորապէս 7,000,000 բ. հասցնել, որ վասպուրական նահանգի համար սարտափելի մեծ գումար է:

Յաւեղանքն և այդ ամենի վրա անցեալ տարվայ ստիպելով, երեւակեցեք ուրեմն, մեծապատիւ ունեղիրներ, թէ այդ աշխարհի տրնտեսական միջակը ինչ աստիճանի մէջ կարող է լինել:

Չարմանալի չէ ուրեմն, որ այդ բիւր անգամ սովերի, համաճարակ ժանտախտների, հրդեհների, պատերազմների, սպանութեանց, յափշտակութեանց և ամեն տեսակ նորաստորութեանց ենթարկված ժողովուրդը դեռ իրան նորաստաւարող բարբարոսներից կրկնապատիկ բարձր է թւով, բարձր է բարոյականութեամբ, բարձր է մտաւոր և նրթական կարողութեամբ:

Տօկուն, անյուսաճառ աշխատութիւնը միշտ հրաջքներ է գործում:

Մինչ թիւրքերը վերջին պատերազմի ժամանակ աննկարագրելի բնութեանց ենթարկեցին հայերին, դատարկելով նրանց պաշարեղէնների ամբարները, զրկելով նրանց երկրագործական գործիքներից և կենդանիներից, կողպելով նրանց վերջին կարողութիւնը, այրելով գիւղերում գէղերը, մարգանքերը, քաղաքներում վաճառանոցները, սննդը, կարծում էին, որ այդ արեւելեան ինդի նաւոյցը, պատճառը էրմէնի կեպտերները ոչընչացան և շուտով կենդանութեան վերջին շունչը կը փչեն: Յանկարծ վրատակների, հրկիւղեալ միւրի միջին ֆիւնիկի պէս վերանորոգվեց նայն, թօթափելով իր դարաւոր ստորացնող թմբութիւնը, վեր կացաւ և պաշտպանվելու, զէնքի պէտք զգաց: Նրա պանդուխտ ազգակիցները տեսնելով նրանց անհաւատար կրուի ձգնածամբ, ամեն կողմից օգնութեան հասան,